

Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Պ-228³-28.02.2008-ՊԱ-010/2
Պ-1230¹-06.09.2011-ՊԱ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 19.4. հոդվածով՝

«Հոդված 19.4. Մասնավոր պահնորդական գործունեություն իրականացնելու համար լիցենզիա տալու եւ դրա ժամկետը երկարաձգելու համար պետական տուրքի դրույքաչափերը

1. Մասնավոր պահնորդական գործունեություն իրականացնելու համար՝ բազային տուրքի 500-ապատիկի չափով

2. Մասնավոր պահնորդական գործունեություն իրականացնելու համար լիցենզիան վերաձեւակերպելու կամ կրկնօրինակը տալու համար սահմանված դրույքաչափի 10 տոկոսի չափով»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԺ կողմից 06.12.2011թ. առաջին ընթերցմամբ ընդունված <<Մասնավոր պահնորդական գործունեության մասին>>, <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> ՀՀ օրենսգրքում լրացումներ կատարելու վերաբերյալ, <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին << Պետական տուրքի մասին << օրենքում լրացում կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագծերի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների:

Առաջարկության հեղինակը	Հոդվածը, կետը, ենթակետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկությունը	Եզրակացությունը
ՀՀ Կառավարություն	Հոդված 2	<< Պաշտպանվող անձ>> հասկացությունը խմբագրել՝ նկատի ունենալով այն, որ կարող են լինել դեպքեր, երբ անձը համապատասխան իրավաբանական անձանց հետ պայմանագիր կնքի ոչ միայն իր կյանքի և առողջության պաշտպանության նպատակով, այլև երրորդ անձի:	Առաջարկությունը ընդունվել է և շարադրվել է նոր խմբագրությամբ:
ՀՀ Կառավարություն	Հոդված 10, առաջին մաս	<<Ձերբակալելու>> բառը փոխարինել << վնասագերծելու>> բառով	Առաջարկությունը ընդունվել է:
ՀՀ Կառավարություն	Հոդված 12, 3-րդ մաս	Հանել <<25 տարին լրացած>> բառերը	Առաջարկությունը ընդունվել է:
ՀՀ Կառավարություն	Հոդված 16	Պարզաբանել << Տրանսպորտային միջոցը հարկադիր կանգնեցնելու միջոցներ>> հասկացությունը:	Առաջարկությունը ընդունվել է և նույն հոդվածի երկրորդ մասը շարադրվել է նոր խմբագրությամբ:
ՀՀ Կառավարություն	Հոդված 20, 2-րդ մաս	Վերջում լրացնել << Բացառությամբ նրանց կողմից զինված դիմադրություն ցույց տալու, պահնորդի (թիկնապահի) կամ պահպանվող այլ անձի կյանքին կամ առողջությանը, պահպանվող օբյեկտի անվտանգությանը սպառնացող զինված կամ խմբակային այլ հարձակումը կանխելու դեպքերի>> բառերով:	Առաջարկությունը ընդունվել է:
ՀՀ Կառավարություն	Հոդված 22, առաջին մաս	<< Կրթական>> բառից առաջ ավելացնել <<Համապատասխան>> բառը:	Առաջարկությունը ընդունվել է:
ՀՀ Կառավարություն	Հոդված 25, առաջին մաս	Առաջին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.<<Պահնորդի (թիկնապահի) կյանքն ու առողջությունը ապահովագրվում է գործատուի հաշվին>>	Առաջարկությունը ընդունվել է:
ՀՀ Կառավարություն	Հոդված 30, 2-րդ մաս	<<Օրենսդրությամբ>> բառից հետո	Առաջարկությունը ընդունվել է:

		լրացնել<<Ինչպես նաև այլ իրավական ակտերով>> բառերը:	
ՀՀ Կառավարություն	Հոդված 34, առաջին մաս	<< Նախատեսված>> բառից հետո լրացնել <<Պահանջները չկատարելու>> բառերը	Առաջարկությունը ընդունվել է:
ՀՀ Կառավարություն	Հոդված 23	Հստակեցնել համակարգող խորհուրդների կարգավիճակը	Առաջարկությունը ընդունվել է, 23-րդ հոդվածի 3-րդ մասը հանվել է:
ՀՀ ԱԺ ՊԱԱՆԳ հանձնաժողով		Նախագծում անհրաժեշտ է նախատեսել անցումային դրույթներ	Առաջարկությունը ընդունվել է և 35-րդ հոդվածը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ <<Սույն օրենքը ուժի մեջ է մտնում 2013 թվականի հունվարի 1-ից>>:
ՀՀ Կառավարություն		<< Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածը համապատասխանեցնել<<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջին:	Առաջարկությունը ընդունվել է, 2-րդ մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ <<Սույն օրենքը ուժի մեջ է մտնում 2013 թվականի հունվարի 1-ից>>:
ՀՀ Կառավարություն		<<Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագծով լրացվող հոդվածի համարակալումը վերանայել՝ նկատի ունենալով այն, որ օրենսգրքում արդեն իսկ առկա է 169.18 հոդվածը:	Առաջարկությունը ընդունվել է և 169.18 հոդվածը փոխարինվել է 169.23 հոդվածով: